

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի
31 հոկտեմբերի 2013թ.

Նախագահ՝ Ա. Վ. Յուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 8 անդամներ: Հրավիրվել էր նաև
համակարգչային լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

**1. 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների I ընթացիկ
ստուգումների արդյունքների ամփոփում.:**

/զեկ. Ա. Վ. Յուցուլյան/

**2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման վիճակի
քննարկում:**

/զեկ. Ն. Ն. Դավթյան/

3. Ասիստենտի պաշտոնի հաստատում:

/զեկ. Ա. Վ. Յուցուլյան/

ԼՄԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց
դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Յուցուլյանը: Նա ներկաներին ներկայացրեց, որ
ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի նախատեսված
էր երեք հարց /պրակտիկաների ամփոփում/: Կապված պրակտիկայի տևողության
հետ օրակարգի այս հարցը կքննարկվի հաջորդ նիստում: Փոխարենը կքննարկվի
ասիստենտի պաշտոնի հաստատում հարցը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի
հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Յուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ.
Յուցուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և I
ընթացիկ ստուգումների արդյունքները /ամփոփ տվյալները կցվում են
արձանագրության տեքստին/: Զեկուցողը անդրադարձավ նաև այն առարկաներին,
որոնց միջին առաջադիմությունը ցածր է միջինից, ինչպես նաև այն առարկաներին,
որոնց միջին առաջադիմությունը շատ բարձր է: Ա. Վ. Յուցուլյանը հանձնարարեց,

ամբիոններին պարզելու այդ ծայրահեղությունների պատճառը և սկսել պատրաստվել II ընթացիկ քննություններին ու ընթացիկ ստուգումներին:

Այնուհետև ֆակուլտետի դեկան Ա. Վ. Յուցուլյանը կապված ուսումնական պրոցեսի արդյունավետության հետ ներկայացրեց մի քանի հանձնարարականներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Բ/Մ և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Մ. Ա. Զաքարյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին, միաժամանակ ներկայացնելով, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոններին, որ երկրորդ ընթացիկ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի համակարգչային մասնագիտական լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում գործում են երկու համակարգչային մասնագիտական լաբորատորիաներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման վիճակը ֆակուլտետում կայուն է: Ուսանողներին ըստ մասնագիտությունների ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն: Ապահովվում է նաև ծրագրային և տեխնիկական անհրաժեշտությունը: Լաբորատորիաներում գործում է նաև ներքին ցանց և անվճար ինտերնետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը: Նրանք կարևորեցին համակարգչային մասնագիտական լաբորատորիայի դերը ֆակուլտետի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման գործում, միաժամանակ իրենց գոհունակությունը հայտնեցին նշված լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանի մասնագիտական հմուտ կարողությունների վերաբերյալ:

Օրակարգի երրորդ հարցի մասին խորհրդի նախագահը ներկայացրեց «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի թ. Յ նիստի որոշումը. ամբիոնի դասախոսներ Աննա Սմբատի Սիմոնյանը դարձել է տեխ. գիտ. թեկնածու, իսկ Մարիետա Ալբերտի Ճաղարյանը ունի մեկ մեթոդական ձեռնարկ, հանձնել է մեկ մինիմումի քննություն և ունի 17 տարվա մանկավարժական ստաժ՝ ԵՊՀ ԻՄ-ում: Նշված դասախոսները համապատասխանում են ասիստենտի պաշտոնին և

որակավորման հանձնաժողովի կողմից ներկայացված պահանջներին: Ուստի ներկայացվում են մասնաճյուղի ատեստացիոն հանձնաժողովին ասիստենտի պաշտոնում հաստատելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել մասնաճյուղի ատեստացիոն հանձնաժողովին Աննա Սմբատի Սիմոնյանին և Մարիետա Ալբերտի Ճաղարյանին, ասիստենտի պաշտոնում հաստատելու համար:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**